ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 26.04. 2021թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ,
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական,
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն,
6. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան,
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության 4-րդ կուրսի պրակտիկային չմասնակցած ուսանողներին կրկնակի պրակտիկայի թույլտվության մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

2. ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ ուսանողուհի Վիկտորյա Վարդանյանի դիմումի քննարկման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

3. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Մերվիս» մասնագիտության ուսանող Ալբերտ Երվանդի Միքայելյանի դիմումի քննարկման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության 4-րդ կուրսի պրակտիկային չմասնակցած ուսանողներին կրկնակի պրակտիկայի թույլտվության մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Արտյոմ Վաղարշակի Տեփանոսյանի, Հայկ Կարենի Սարգսյանի և Արտյոմ Սերյոժայի Բախմախչյանի կողմից ներկայացված դիմումներում նշվում է, որ նրանք ուսումնական պլանով նախատեսված պրակտիկայի ընթացքում գտնվել են ինքնամեկուսացման մեջ՝ COVID 19-ով հիվանդի հետ շփման պատճառով և չեն կարողացել ներկայանալ պարակտիկայի, ուստի խնդրում են թույլ տալ պրակտիկային մասնակցելու կրկնակի փուլով՝առանց կրեդիտ վճարման, բացակայությունները համարելով հարգելի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Գ. Նիկողոսյանը, Բ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Արտյոմ Վաղարշակի Տեփանոսյանի, Հայկ Կարենի Սարգսյանի և

Արտյոմ Սերյոժայի Բախմախչյանի դիմումները բավարարել և թույլ տալ պրակտիկային մասնակցելու կրկնակի փուլով՝առանց կրեդիտ վճարման, բացակայությունները համարելով հարգելի:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝
ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ ուսանողուհի Վիկտորյա Վարդանյանի դիմումի քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Վիկտորյա Սեդրակի Վարդանյանի հողմից ներկայացված դիմումում նշվում է, որ նրա ուսանողական իրավունքները վերականգնվել են և խնդրում է թույլ տալ մանկավարժական պրակտիկան անցկացնելու Շիրակի մարզի Երազգավորս գյուղի միջնակարգ դպրոցում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Ա. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողուհի Վիկտորյա Սեդրակի Վարդանյանի դիմումը բավարարել և թույլ տալ մանկավարժական պրակտիկան անցկացնելու Շիրակի մարզի Երազգավորս գյուղի միջնակարգ դպրոցում ս. թ.-ի 26.04-21.05 ժամանակահատվածում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության ուսանող Ալբերտ Երվանդի Միքայելյանի դիմումի քննարկման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Ալբերտ Երվանդի Միքայելյանի

ուսումնառությունը ընդհատվել է 19.12.2019-09.04.2021թթ՝ժամկետային զինծառայության մեջ գտնվելու պատճառով և նրա կողմից ներկայացված դիմումի համաձայն հայտնվում է, որ 09.04.2021թ.-ին վերադարձել է Ազգային բանակից և խնդրում է վերականգնել իր ուսանողական իրավունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Համաձայն «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի (ՀՀ ԿԳՆ 17 դեկտեմբերի 2018թ թիվ 1676-Ն հրամանի) 3-րդ մասի 21, 22 կետերի, ս.թ. ապրիլի 9-ից վերականգնել Ալբերտ Երվանդի Միքայելյանի ուսանողական իրավունքները հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի I կուրսի II կիսամյակից:

Հանձնարարել հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկանին «Սերվիս» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգի I կուրսի ուսանող Ալբերտ Երվանդի Միքայելյանի՝ 2021թվականի փետրվարի 8-ից մինչև ապրիլի 9-ը ընկած ժամանակահատվածի համար նախատեսված ուսումնառությունը կազմակերպել անհատական գրաֆիկով՝ ուսումնական գործընթացին զուգահեռ մեկամսյա ժամկետում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան Ս. Շահպարոնյան
Ռեկտորի օգնական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի՝ Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման
բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան